

« Զի հրահանգից վարժարանի
Զեմ տակաւին ներկուռ բանի » .

և վերջն ալ կը կնքէ .

« Կատարեցաւ բանքս չափեալ
Ի համբակէ նըւաստացեալ » :

Թուի թէ ոչ միայն վարուցը վրայ կը դրանշանա-
յին տեսողք, այլ և այնպիսի վարք ստանալու
կերպը կ'ուզէին սովորիլ: Այլ չէ հաւաստի ինչ
որ մեր պատմահայրն Չամչեան կարծէ (Գ, 86) թէ
քահանայութեանն ատեն գրած ըլլայ Ենորհա-
լին ճգնողական վարուցը վրայոք գիրք մը ¹:

Այսօրից և ուսմանց ապաստանաց մէջ սնեալ և
գրեթէ ծնեալ, բնութիւն եղաւ իրեն ասոնցմով
իր հոգին և միտքը կրթել, և այսպիսեաց ակոր-
ժիլ: Կը փափաքէր մտաց թեւերն ալ արձկնել,
անոր յարմար տեղեաց և իրաց վրայ գեղեցիկ և
մեղուաբար քաղել իմաստութեան մեղր ու ծաղիկ:
Կը համարձակի յայտնելու այսպիսի բերումը և
նաև զրկումը:

« ՅԱթենականն քաղաքի
Զանձն իմաստիւք ոչ կրթեցի » .

և կը յիշէ հին Յունաց գերագոյն հանձարները,
և անոնց հետեւելու նախանձը:

« Ուր ըստանն Պղատոնի,
Եւ չափ սուրբ Հոմերոսի.
Ուր ստորագոյն Արիստոտել,
Տասն բանիւ զըրօն էի.
Ուր հոյք ամեն հըռետորի,
Ժողովարան ճարտասանի,
Ներհմտութիւն քերականի ² » :

Սեաւ Լերանց վանորէից մէջ արգարեւ կային
իրեն վարդապետը հմուտը և վայելագիրը, ինչ
պէս գիտնականն Ստեփաննոս, և մեծ Վկայասի-
րին ատեն և վերջը յիշեալք Մեղրիկն, և Մատ-
թէոս, և Կիրակոս Տօնամակաց աւարտողն, և
այլք: սակայն հարկ է խոստովանիլ որ ոչ միայն այն
ըզձացեալ նրբամիտ հեղինական Պղատոնը և Արիս-
տոտէլք չկային, այլ և անոնց հասնելու ճամբան
ալ շատ բանուկ չէր, այսինքն յունական գաղութի
չկար. և նոյն իսկ յիշեալ գիտուն և գրագէտ վար-
դապետք ԺԲ արծաթի դարուս, կամ քիչ կամ ոչ
գիտէին յունարէն լեզու, յորում գեռ շատ տե-
սակ գիտութեանց գրքեր գտուէին. այլ անոնց
Ս. Հարց գործերն մեծաւ մասամբ հայերէն թարգ-
մանուած ըլլալով 700 տարուան միջոց, և այն
վանորէից մէջ ալ ժողոված՝ թէ միանձանց և թէ
մեր երկու Վկայասէր կաթողիկոսաց ջանքով,
տեղւոյն բանասէրք և գրասէրք ալ այնպիսի թարգ-
մանութեամբ և անոնց հետեւեալք մեր բնիկ Հայ
վարդապետաց շարագրած գրքերով իրենց ու-
սում և պարապմունք կ'ընէին. և եթէ շատ տե-

սակ գրոց և ուսմանց չէին կըրնար զբաղիլ՝ այն
քիչ տեսակները ստեղծ կարգաւով և քննելով
լաւ կը թափանցէին անոնց մտաց, կը սեփակ-
նէին անոնց խօսքերը և ընտիր շարագրութիւնը
որով և իրենք ալ չափաւոր հմտութեամբ և յըս.
տակ լեզուով հաւասար նախնեաց կամ քիչ պ.
կաս՝ կը գրէին: Ասով մեզի գրեթէ 800 տարի
հարազատ հայկաբանութեան պայծառ վտակ մը
հոսեր և հասուցեր են. իսկ գիտութեան ատի.
ճանն հասարակօրէն չէ բարձրացեր. այլ առանձ.
նական անձինք յոյն և արաբացի կամ պարսիկ
գաղութեան ետեւ ըլլալով կըրցեր են աւելի
զարգանալ մտք և բանիւ, նոր գիտութեանց
համետեւել և ուրիշներու ալ համետեւ ընել: Ինչ
պէս յետ մեր ոսկեղինիկ թարգմանչաց Ե գարու,
Պետրոս Քերզոյ Սիւնեաց (Չ գար), Անանիա Շի-
րակացի (Ե), Յովհաննէս Իմաստասէր (Ը), Ստե-
փաննոս Սիւնեցի (Ը), Յովհաննէս Բժիշկ (Թ),
Գրիգոր Մագիստրոս (ԺԱ), Սարկաւազ Վ.
(ԺԱ-ԺԲ), Միխիթար Հերացի (ԺԲ), և այլն: Այս
պիսիք սակաւաթիւ են մեր գաղութեան մէջ.
գուցէ և շատ համարձակելի չէր անոնց՝ վարգա-
պետել արտաքին գիտութիւններ վանորէից մէջ.
ուստի և այս սուրբ Լերանց բաղնիքի վանից և
վանականաց մէջ ալ հազուադէպ պէտք է հա-
մարիլ յունագէտները, մանաւանդ լաւ գիտող-
ները. որով և մեր կրսեր Վկայասէրն և Ենորհա-
լին՝ իրենց նախնեաց՝ Գր. Մագիստրոսի և անոր
որդոց մեծ Վկայասիրին՝ առաւելութիւնը չու-
նեցան յայտ մասին. գուցէ քիչ մը գիտէին յու-
նարէն, այլ ոչ կատարեալ հասկանալու և թարգ-
մանելու չափ. ապա թէ իրենք ալ Բ թարգմա-
նիք կ'ըսուին, երկրորդ ձեռքով են թարգմա-
նիք, այսինքն ուրիշ լաւ յունարէն գիտողաց
ձեռք թարգմանել կու տային, և իրենք զժայն-
րէն շարագրութիւնը կը կոկէին և վայելացընէին.
ինչպէս վկայէ ինքնին Ենորհալին Ս. Սարգսի վկա.
յարանութեան և ուրիշ քանի մը թարգմանու-
թեանց յիշատակարանաց մէջ. այսպէս կ'ընէր
երբեմն կամ ընել կու տար Մեծ Վկայասէրն ալ:

Կը շարունակուի:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՅ ՅԻՏԱԿԻԱ

ՎԵՑԵՐՈՐԳ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՈ

(Տես էրես 200.)

Ուրիշ երեւիլի և իսկագոյն հեղինակ
մ'ալ է Պիլի, որ մեր մէջ մտուց Անգ-
ղիացւոց յեղաբարոյ (humour) ըսուած
ոճը, տեսակ մը՝ յորում ոճն շուտ մը լա-
լէն 'ի ծիծաղ կ'անցնի, աղօթքէն յիւր.

¹ Լամբրոնացւոյ ըսածը « ճգնողական կերպ կըրէ », ուրիշ օրինակի մէջ կարգաւով քերէ:

² Նաև 47 տարի ետեւ առ Մանուէլ կայսր գրելով ցա-
ւօք կը յիշէ լաւ վարժարաններ և ձեռնտուներ չունե-
նալն այն ատեն 'ի Հայս. « Ուր մեր վարժարանը՝ 'ի թա-
« գաւորական պատրաստեալ հրամանացն. և կամ յոյս
« փառաց և պարզեաց՝ յառաջացելոցն յիմաստս, որ մա-
« նաւանդ մանկարարոյից՝ են առաւելագուծի պատճառ
« փութոյ կրթութեան »:

գիծանս, նուազէն 'ի պարսաւ : Անշուշտ այս տեսակիս մէջ շատ պիտի յաջողէր Պինի' եթէ տարածամ չվախճանէր :

Ներքին և քնտանեկան ըսուած վիպասանութիւնն, որ մեր մէջ հնարուած կրնայ ըսուիլ Ֆուգոյոյի Յակոբ Օրդիս գրուածովը, ոչ սակաւ հետեւողներ ունեցաւ. ինչպիսի են Ռանիերի, Պալտեքիսի, Թոմազէոյի Հաշաւք և Սէր ըսուածն, Գարգաւոյի՝ Անձելիգա Մալրիս և Դամիսկոյ ըսուածներն :

Այս ամեն հեղինակներէն զատ բանաստեղծութիւնն և բանասիրութիւն ունեցան ուրիշ երեւելի գրիչներ ալ. ինչպէս Թորդի, Լ. Գարրեր վենետկեցի, Արիլի Պրեշիացի, Գարգաւոյ, Պարպիերի, Թոմազէոյ, Մամիսկի փիլիսոփայ և քաղաքավարիչ, Ռիչի, Գոսպա, Պէրլէ, Ռոզեդի, Նիգոլիսի Պրեշիացի՝ որ Պայռընի այլեւայլ գործերը թարգմանեց, ինչպէս Մաֆֆէի ալ զՇիլլէր. Պելլոյոյի՝ գեղեցիկ թարգմանութիւն մ'ընծայեց յոյն ողբերգուաց. Սարվիլի որ թարգմանեց Կեթէի Ֆաւստը. Բարի որ թարգմանեց Միլտոնի Կորուսեալ Դրախտը. Կրասսի կոմսն թարգմանեց զՓարսաղիականն, Արգանձելի՝ թարգմանեց մաս մը հին յունական երգերու. Ռոմանի, Բոերիոյ Մամելի, Բրադի և Ալեարտի. ասոնց հետ արժանի են յիշատակի և տիկնայքն Կոշաչի, Ֆերուչի, Բոձձիոյիսի, Պրեկցոնի, և այլն. որոց քերդուածքն մեծ պատիւ ունին մեր գրականութե մէջ : Յանպատրաստից երգողք ալ, եռանդուն իտալական հանճարոյ եղանակաւ չպակսեցան մեր մէջ. այսպիսիք են Ճիոննի, տիկինն Պանտեդիսի, Չկրիչի, Գարրեր, Դատտէի, Ռեկարտի, Պէնտուչի, Չիգգոնի, Ճիսմեդդա Միլլի :

Բանաստեղծութեան և վայելուչ ու անուշակ գրականութեան ցեղէն անցնելով աւելի ծանր և խիստ, բայց և աւելի ազնիւ ցեղին՝ Պատմութեան, կը տեսնենք որ և յայսմ իտալիա աճեցուցեր է իր ժառանգութիւնը, և յիշեր է որ ընծայեր էր զՄուրադորի և Դիրապոսի, և 'ի ձեռն Մագդիաւելլեայ և Վի-

գոյ՝ ծներ էր զիմաստասիրութիւն պատմութեան : Այս դարուս մէջ ոչ սակաւ իտալացիք նշանաւոր եղան 'ի պատմագրութե. յորս զլիսաւորք են Կարլոս Պոլլա, և Պետ. Գոլլեդդա, ազնիւ արձակաբան գրիչք. առաջինն սկսաւ նկարագրութեամբ գործոց անկախութեան Ամերիկայ, յետոյ Կուլչիարտինիի սկսած իտալիոյ պատմութիւնը շարունակեց. ուրիշ գործով մ'ալ ճառեց՝ մեր ընկերական վիճակին վրայ փրանկաց յեղափոխութենէն մինչև 'ի 1814. այս ամեն գրուածքն ալ հրաշալի պերճաբանութեամբ լի են : Նոյնպէս է և Գոլլեդդայի Նաբոլիի պատմութիւնը, իտալիոյ սիրոյ և ազատութեան ոգւով գրած : Նշանաւոր են նաև Դոսկանացին Չիսմեդդիսի (որ նոր Յունաստանի ազատութեան վրայ գրեց), Կրեկորիոյ, Սերրա, Բալմիերի, Գոշոգոյ, Տանտոյոյ, Ամարի, և այլն :

Գանդոշի հանրագիտակ ամենայն ազգաց պատմութիւնն ալ՝ նկատելով իրենց քաղաքականութիւնը, կրօնքը, զիտութիւնը, մեծ համբաւ ունեցաւ իր անբաւ աշխատութեան համար, և շատ լեզուներ թարգմանեցաւ. անկէ առաջ Գանդու բանաստեղծութիւններ և վիպասանութիւններ գրած էր. իսկ յետոյ գրեց զՊատմութիւնն Հարիւր ամաց, Պատմութիւն իտալացւոց, Պատմութիւն Գոմիի, Բարինիի և իր դարուն, Էչչելինոյ, Լոմպարտիոյ յժժ դարու, Պեգգարիայ, և Պատժական իրաւանց :

Կեսար Պալպոյ ալ հրատարակեց պատուական պատմութիւններ, ինչպէս Տանդէի վարքը, իտալիա Բարբարոսաց ատեն, Համառօտ պատմութիւն իտալիոյ վասն դպրոցաց, ճանչնալով որ տղայք յառաջ քան Յունաց և Հռովմայեցւոց պատմութիւնը՝ պէտք էր իրենց ազգինը սովորէին : Ետքի ատեններս այս տեսակ գրուածներ շատցան, և ռամկական կամ ժողովրդական գրականութիւնը զարգացուցին Աքորդի, Ամպրոզոյի, Լամպրոզուգիսի, Թոմար, Գանդոշ, Դաշեռնա, և այլն : Նաբոլիցի Ռոյա մեծա-

պէս ջանաց հռչակելու իտալիոյ պատմութիւնը. իր բազմահմուտ գրուածքն ինչուան հիմայ պատմութե մէջ մութ մնացած շատ մասեր կը լուսաւորեն: — Նշանաւոր են և գրուածք Չիպրարիոյ, մանաւանդ Միջին դարուց Տնտեսութեան պատմութիւնն: Շատ հմտաբար գրած են և Ռոզմինի ու Ճիուլինի Միլանցիք իրենց հայրենի քաղքին պատմութիւնը: — Նորերս պիտանի պատմութիւններ գրեցին Սերրա, Մաննա, Գարպոնէ, Վարեզէ, Պիսանգի Ճիովինի, Պրոֆֆերիոյ, Տանտոյոյ, Եոպի, Օտորիչի, Ռոմանինի, Ռոսագոնի, Վաննոչչի:

Ասոնց վրայ յաւելուած մը կ'ըլլան ընդարձակ տեղեկութիւնքն իտալիոյ երեւելի ազգատոհմից՝ զոր գրեց կոմսն Լիդդա, և Պատմական Դիւանագիրքն (Archivio Storico) զոր հրատարակէր Վիետեօ 'ի Ֆիրենցէ, և յորում շատ անծանօթ մնացեալ ժամանակագիրք և պատմաբանք առաջին անգամ 'ի լոյս ընծայեցան: Բիեմոնդի թագաւորն կարլ Սլաւերդոյ մասնաւոր անձանց յանձնեց պատմական յիշատակները հաւաքել, և հրատարակեցին քանի մը մեծ հատորներ: Առանձնական ընկերութիւն մ'ալ 'ի Դոսկանա ձեռք զարկաւ իտալիոյ տեղագրութեան, ընդարձակ գործ մը, որոյ առաջնորդ կեցաւ Եռզզաւնի Օռլանտինի: Հոն հրատարակեցաւ և աշխարհագրական բառգիրքն Բիքեդիի, մանրապատում և բազմահմուտ: — Ալպերի հրատարակեց Վենետիկեան դեսպանաց տեղեկաբանութիւնները, յորում շատ կարևոր քաղաքական գիտելիք կան թէ իտալիոյ և թէ ուրիշ տէրութեանց վրայօք. (վերջին մասն ալ Օսմանեան տէրութեան վրայ տեղեկագրութիւնք է):

Զինուորական արուեստի վրայ ալ գրուածք չպակսեցան. ինչպէս են Զինուորական բառգիրքն Կրասսիի, Բաղդախնդիր զօրավարաց պատմութիւնն՝ զոր գրեցին Ռիգոդդի և Ֆապպրեդդի. Վազզանի գրեց իտալացւոց պատերազմները 'ի Սպանիա. Մարիալն տ'Ա-

յալա ալ մասնաւոր դէպքեր կը պատմէ:

Իսկ արուեստից և դպրութեանց պատմիչք են, Զիգոնեարա, Ռոզինի, Ուկոնի, Բեցցանոյ, Ճիոշտիչի, Ռաւալլի, Զերեզեդոյ, Գոռնիանի և Սելվադիգոյ: Իտալիոյ նոր դիպուածոց վրայօք ալ գրեցին Ֆարինի, Կոշալոնի, Ռաւալլի, Մոնդանելլի: — Տընտեսական և Քաղաքագիտական խընդրոց վրայ գրեցին Բեզզիոյ, Անձելոնի, Պալպոյ, Սարվանեոյի. Ետքինս անուանի փաստաբան մ'է, ինչպէս նաև Նիգոլինի, Բոերիոյ Նաբոլիցի, Գարսինիանի Բիզացի, որք ճարտասանութե վրայ աւելցուցին և մեծ հմտութիւն: — Ռոսսի և Սիւմոնտի ալ նոյն նիւթոց վրայ փռանկերէն գրեցին:

Հնախօսութիւնն ալ ունեցաւ երեւելի գրիչներ, ինչպէս են մեծահռչակն Վիւզոնի, որոյ անուան կցորդեցաւ Ռոզելլինի՝ ընկերն Շանբոլիոնի, որոյ հետ աշխատեցաւ հին Եգիպտոսը հողէ դուրս հանելու և նշանագրաց գաղտնիքը լուծելու: Ասոնց աւելցընենք. Օրիոլի, Մաճճոյոյի, Միգալի և Լապոչու անուններն ալ:

Գիտնական լեզուաց ուսումն ալ սիրողներ գտաւ յիտալիա, հանդերձ հրմտական գրուածք Բունաց և Լատինաց դասընտիր հեղինակաց վրայօք, նոյնպէս նաև արեւելեան լեզուաց քննողք. իբրև արեւելագէտ կըրնանք յիշել երկու Բիեմոնդեցի, Բեյրոն և Գորրեզիոյ, որք անշուշտ հետեողներ ալ պիտի ունենան. և յուսամք որ Մեճճոֆանդէ մը բերող իտալիա ուրիշ ազգերէ ետև չմնայ:

Թողլով զգալութիւն՝ գանք տեսական ուսմանց. յայսմ ալ իտալիա կ'ընծայէ նշանաւոր անձինք և գրուածք: Փիլիսոփայութեան պատմութեան մէջ շատ պայծառ փայլին անուանքն՝ Ռոզմինի, Ճիոպերդի, Մաւմիլիանի: Մեր համառօտ գրուածքին չիվայլեր քննել անոնց կարծիքները, գրութիւնը, վիճաբանութիւնները և տեսութիւնները, միայն ըսենք որ իտալական փիլիսոփա-

յութիւնն որ խիստ շատ զգացուն է՝ ջանաց նախնեաց աւանդութեան հետ բարեխառնել գերմանական դպրոցին ծայրայեղ գերազանցականութիւնը, գաշնաւորելով զգաղափարականն ընդ իրականին, զգալին ընդ իմանալոյ: Փիլիսոփայից թիւն աճեցուցին Կալոռքի, Եւստոքի, Պորեյի, Բոլի, Չեկոֆուսի, Պարոյի, Բեսդալոցցաւ և Աւստրիական Ֆրանկի: — Յիշելոց մէջ ձիոպերդի Բիեմոնդեցին, ճարտասան փիլիսոփայն, մասնաւոր դիտմունք մ'ալ ունէր իտալական ազգայնութիւնը արծարծելու. և իր հանճարոյն զարգացմամբ տեսութիւններն և իղձերն ալ ընդարձակեցան, որով իր գրուածոց մէջ թողլով զբացարձակ գաղափարները՝ իտալական վերանորոգման մասնաւոր նշկատմունքը կը մտցընէ:

Իտալիոյ բժշկութեան պարծանք եղան Թումմազինի, Բաւիցցա, Սգարբա, Մադդէի, Ռազորի, Վագգա, Պոնֆալիսի, Նեսքոյի, Բոչչիոնոյի, Ռաւցի, և այլն. ինչպէս և բնական և բնաբանական գիտութեանց մէջ՝ Նոպիլի, Մասսոյի, Կաճճերի, Գադուչոյ, Թատտէի, Մելլոնի, Մատթէոչչի, Դարձիոնի — Դոճճեդի, Բիլլա, Կասթարիս, Ինկիրամի. Սաշի, Գառլիսի, Բիւցցա, և այլք. ցուցին որ իտալիա ոչ երբեք զուրկ մնացեր է մեծամեծ ուսումնական հանճարներէ, և թէ ինքն առաջին եղած է անոր սահմանը ընդարձակելու և անոր ջահը պայծառացընելու, մինչդեռ Եւրոպիոյ ուրիշ կողմերն դեռ մթութեան մէջ էին:

Անցողաբար ըսենք որ եթէ այս միջոցիս գեղարուեստը, և մասնաւոր ճարտարպետութիւնն անխրախոյս մնացին, պատկերահանութիւնն և անդրիագործութիւնն բաւական վերականգնեցան: Անդրիագործութեան պարծանք են յիտալիա Դեմետրիսի, Ֆրագգորոյի, Պարոյի, Մարգեդի, Ֆիլեպի, Մարոգեդի, Ֆերրարի, Բալթալոնի, և նորագոյնքն Սանդերելլի, Տիշթրէ, Ֆետի, Ֆարդուգիոյի, և այլն, որք Գանովայի բացած նոր ճամբուն հետեւե-

ցան. — Պատկերահանութիւնն թողուց Դաւթի փռանկաց դպրոցը, որոյ հետեւեցան Արքիւսի, Լաւոտի, Գաւուչչիլի, Պելլիկոնոյի և Բալաձի, և ԺԴ դարուն աւանդութեանց վերադարձաւ, մասնաւորապէս պատմական մասին: Ասոր մէջ ալ ընդդէմ դասականին՝ վիպական ոգի մը մտաւ, թողլով դիցաբանական նիւթերը՝ ազգային հին և նոր դիպուածներ ներկայացընելու, աւելի ճշմարտութիւն պահանջելով՝ ի տիպս կերպարանաց, ի դիրս, ի դէմս, ի տարազ զգեստուց, ջանալով գտնել իւրաքանչիւր ժամանակաց յատուկ կերպարանքները: Պատմական պատկերահանից մէջ անուանի եղան Ալէս, Բոտտալի, Սապարելլի հայր և որդի, Պեճոնոյի, Արիսկոյի, Մալապետա, Մորելլի, Բոլլապիսի. և շատ ուրիշ աւելի նոր նկարիչք, որք յոյս կու տան արուեստը հասցընելու իր ճշմարիտ և ազնիւ նպատակին, որ է առանց արուեստակութեան պարզութիւն և բնականութիւն: Մանաւանդ եթէ յիշեն միշտ Պլատոնի ըսածը, թէ Գեղեցիկն պէտք է ճշմարտին փայլումն ըլլայ. — այս առածիս մէջ է ընդհանրապէս գաղտնիքն և սահման արուեստի:

Երկինք, բնութիւն և յօժարութիւն բնակչացն՝ զիտալիա աթոռ ըրին երաժշտութեան. յայսմ՝ իտալիա իր փառքը պահեց նաեւ ծառայական խաղաղութեան ատեն: Յետ Բաւարիայի և Չիւարոզայ, ելաւ Ռոսսինի այս առտուածային արուեստին նոր մղում և յառաջատուութիւն տալու. հռչակաւոր Բեղարոցին իր դիւրագարձ, յանդուգն և բեղնաւոր հանճարովը զարմացուց զԵւրոպա և լցուց իր ստեղծուածովք: Յետ նորա կարծուէր թէ երաժշտութեաթոռն պիտի վերցուէր յիտալիոյ. վասն զի Սեւիլիոյ վարսավիրայի և Գուլիելմի մեծահռչակ հեղինակն՝ կատարեր էր արուեստին շրջանակը, հասցընելով ի գերածայրութիւն: Բայց արուեստն միշտ կըրնայ ունենալ նոր ներշնչմունք և նոր տեսակ բացատրութեան. որով Պելլիսի կըրցաւ զմայլե-

յընեւ զմեզ քաղցր և սրտաճմիկ երգերով, որք մեծ զուարճութիւն եղան սիրալիր սգուց, և երկնային լեզու մը լսեցուցին սրտից. չունէր նա Ռոսսինիի զարմանալի և մեծ զօրութիւնը, այլ իր հրազգած մեղեդիքն կը յայտնեն թէ ինչ աստիճանի խոր զգացմանց կարող էր հոգին: — Ուրիշ երաժշտութեան ծաւալող մ'եղաւ երգահանն Տոնիճեդդի. աւելի տաղանդաւոր քան թէ հանճարեղ, բայց բեղնաւոր և ընտրական, և թերեւ աւելի վարժ քան զՊելլինի յերաժշտական արուեստի և 'ի դաղտնիս ներդաշնակութեան. իր գործոց հրաշխարհ երկար տարիներ զմայլեցուց զաշխարհ: — Թատերական նշուագաց փառքը կը պահեն և Բալիկի, Մերգաւաւնդէ, Ռիլլի եղբարք, Գոլչիւս, Գորքոյու, և այլն: — Բարմայի փոքրիկ Պուսսեդդոյ քաղաքը ծնաւ և վերտի, որ մեծ դոլութեանց և մեծ պարսաւոյ ենթակայ եղաւ. ժամանակակիցք զրեթէ առանց կանխակալ տեսութեան չեն կրնար դատել և յարգել որ և է հանճար. և սակայն չի կըրնար ժխտուիլ որ թէ և քանի մը պակասութիւն ունենայ՝ սակայն վերտի հրնարեց նոր տեսակ մը թատերական երաժշտութեան, արդարեւ սրտառուչ, ճշմարիտ և իսկատիպ. այս բանիս վկայեն իրեն հայրենակիցքն ալ օտարք ալ: Ինքը ջանաց իտալական երգը ներդաշնակել գերմանական նուագարանաց. և թատերական արգասեաց քաջահմուտ ըլլալով՝ արժանացաւ կոչուելու երաժշտութեան Դիցիանոյ, իր ընտրած թատերերգները ճարտարապէս եղանակաւորելուն համար: Բայց այս բանիս համար շատ դժարութիւններ ալ ունեցաւ. և մեղի կ'երեւի թէ շատ զգուշալի է այս կերպիս հետեւին. վասն զի վախկայ ընկնալու 'ի սուտ և 'ի չափազանցութիւն, որով խանգարի երաժշտութիւնն, և իտալիա կրնայ իր մինչև հիմայ պահած պսակը կորուսանել:

Թատերական երգախօսութիւն (melodrame) թարգմանք ալ չպակսեցան իտալիա, որ Եւրոպիոյ վանազան կող-

մերը արուեստաւորներ խաւրած է: 1848ի յեղափոխութենէն առաջ իտալիա ստրկաբար երգոց և կաքաւուց զիցուհեաց երկրպագութիւն կ'ընէր, վատ ներով գանձեր՝ զոր կը զլանար գիտնոց և արուեստաւորաց. հիմայ որ իտալիա իր ազգային արժանապատուութիւնը ձեռք բերաւ՝ պէտք է մոռնայ այդ այլանդակ շռայլութիւնները, և արգարաշխ դատաստանի կանոնք օգնէ և խրախուսէ զգիտութիւն և զարուեստ. որք ազատութեան սրբազան կրակով ջեռեալ կրնան փառաւորապէս թրջել վերանալ. և մեր բնական բեղնաւոր երկիրն՝ միշտ պարծի որ ընծայեր է զՏանգէ, Մագգիաւելլի, Միքէլ-Անճելոյ, Ռափայէլ, Դասսոյ, Բեդրարգա, Պոգգաչիոյ, Արիոսդոյ և Գալիլէոս:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

(Տէս Երէս 180:)

11. Երկկենցաղք:

Հետզհետէ աւելի կը հեռանանք: Ահա առիկ քեզի անանկ կենդանիք՝ որ զրեթէ կ'իսով չափ ձկունք են: Երկկենցաղք՝ երկու կենօր կ'ապրին, մէկովը ծովուն մէջ, որ բուն իրենց կենսքն է, վասն զի ծովը իրենց տարրն է. միւսովը ցամաքին վերայ, ուր սողալով կը բաւեն վասն զի իրենց թաթերը հազիւ թէ ձեացած՝ լողակի պաշտօնը ընելու որոշեալ են, և ստորին թաթերնին ալ տափակ ձևով ու ձկան պոչի պէս՝ դէպ 'ի ետեւուն երկնցած են: Երկու սեռի կը բաժնեն զասոնք. 'ի փոկս և 'ի մորս: Առջինները ձկամք կը սնանին և ներ-